ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անի Հունանյան, ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վիեննա (Ավստրիա), 2023 թվականի նոյեմբերի 6-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Սույն թվականի ոյեմբերի 6-17-ը Վիեննայում, ԱՄՀ-ի կարողությունների զարգացման ինստիտուտի (ICD) և Վիեննայի համատեղ ինստիտուտի (JVI) կողմից կազմակերպված «Ներառական աճ» դասընթացը նպատակ ուներ ծանոթացնելու ներառական աճի հիմնական հասկացություններին և գործիքներին: Ընդհանուր առմամբ, ծրագիրը ներառում էր 15 դասախոսություն, 6 սեմինար, 2 ստուգատես և ինտերակտիվ խմբային նախագիծ՝ երկրորդ շաբաթվա ընթացքում կազմակերպված 9 նիստերով:

Դասախոսությունները ներկայացնում էին ներառական աճի հիմնական հասկացությունները, իսկ սեմինարները հնարավորություն էին տալիս կիրառելու հայեցակարգերը և մտածելու ներառական աճի ռազմավարությունների նախագծման մասին՝ հաճախ բխելով առանձին երկրների օրինակների ուսումնասիրություններից:

Դասընթացի հիմնական թիրախներն էին՝ մեկնաբանել աղքատության և անհավասարության չափերը, վերլուծել մակրոտնտեսական քաղաքականության դերը աճին նպաստելու, կլիմայի փոփոխության դեմ պայքարի, հավասարության խթանման և աղքատության նվազեցման հարցերում, բացահայտել համապարփակ աճի խոչընդոտները և առաջնահերթություն տալ բարեփոխումներին, ձեռք բերել ներառական աճի ռազմավարություն մշակելու հմտություն և գիտելիք՝ սեփական երկրի համար:

5. **Քննարկված թեմաները.**

- Ներածություն. Ինչու՞ փնտրել ներառական աճ
- Աճի տեսություն և աճի հաշվառում
- Աճի ներառականության չափում
- Ներառական աճի ռազմավարության նախագծում
- Հարկաբյուջետային քաղաքականություն և ներառական աճ
- Մարդկային կապիտալ
- Պետական ծախսեր՝ երեխաների համար
- Ժողովրդագրական միտումներ և գենդերային անհավասարություն
- Աշխատաշուկայի քաղաքականություն
- Ֆինանսական ներառականություն
- Ֆինանսական ներառականությունը CESEE-ում.
- Ինչու են օտարերկրյա ներդրումները կարևոր զարգացման համար
- Կառավարում և ներառական աճ
- Կլիմայի փոփոխության հետևանքները ներառական աճի համար
- Արդյո՞ք գնաճը կպահպանվի CESEE-ում աշխատաշուկայի լարվածության պայմաններում
- Խմբային աշխատանք. քննարկում և պատրաստում շնորհանդեսներին

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Բացի 5-րդ կետով ներկայացված թեմաների շրջանակներում քննարկումներին մասնակցությունից և փորձի փոխանակումից, դասընթացի վերջում տեղի ունեցած խմբային աշխատանքի շրջանակներում իրականացվել է Ռումինիայի տնտեսության ախտորոշում և ներառական աճի վերլուծություն: Խմբային աշխատանքի արդյունքները ներկայացվել են շնորհանդեսի միջոցով: Շնորհանդեսը ներկայացնողներից մեկը եղել եմ ես:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գործման ընթացքում ձեռք են բերվել մի շարք կապեր այլ երկրների գործընկերների, դասախոսական անձնակազմի և Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության գործառույթների շրջանակում գործունեություն իրականացնող փորձագետների հետ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Գործուղման ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը և գիտելիքները նախատեսվում է փոխանցել ստորաբաժանման, նպատակահարմարության դեպքում նաև նախարարության հետաքրքրված աշխատակիցներին: Ձեռք բերված համագործակցությունները կնպաստեն նաև Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության լիազորությունների շրջանակում՝ բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմների կատարելագործմանը, իսկ ձեռք բերված գիտելիքները և տրամադրված մոդելները՝ ստորաբաժանման ընթացիկ աշխատանքներին և գործառույթների բարելավմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անի Հունանյան

23.11.2023թ.